

## ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հաստատված է

Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիայի  
ընդհանուր ժողովի կողմից  
05.05.2004 թ.

Նախագահ \_\_\_\_\_ Ա. Սաղաթեյան

### Մաս 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիայի անդամակցության սույն կանոնները (այսուհետ՝ Կանոններ) գործում են Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիայի կանոնադրությանը համապատասխան:
- 1.2. Սույն Կանոնները սահմանում են Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիային (այսուհետ՝ Ասոցիացիա) անդամակցելու պայմաններն ու ընթացակարգը, Ասոցիացիային անդամակցելու հավակնորդներին եւ անդամներին ներկայացվող պահանջները, անդամակցության դիմումների ներկայացման ու քննարկման կարգը, անդամակցության դադարեցման կարգն ու պայմանները, ինչպես նաեւ Ասոցիացիայի անդամավճարների տեսակները:
- 1.3. Կանոններին կցված հավելվածը հանդիսանում է Կանոնների անբաժանելի մասը:
- 1.4. Կանոններում փոփոխություններ եւ լրացումներ կարող են կատարվել Ասոցիացիայի ընդհանուր ժողովի (այսուհետ՝ Ընդհանուր ժողով) կողմից:

### Մաս 2. Ասոցիացիային անդամակցելու հավակնորդներին եւ անդամներին ներկայացվող պահանջները

- 2.1. Ասոցիացիային կարող են անդամակցել՝
  - իրավաբանական անձինք – հայրենական ձեռնարկությունները, հաստատություններն ու կազմակերպությունները, ինչպես նաեւ քաղաքացիների այն միավորումները, որոնց գործունեությունն ամբողջությամբ կամ մասնակի ուղղված է հասարակայնության հետ կապերի բնագավառի ձեւավորմանն ու զարգացմանը, որոնք ընդունում եւ հետեւում են Ասոցիացիայի կանոնադրությանն ու վարչության որոշումներին, ներքին կանոններին:
  - ֆիզիկական անձինք - Հայաստանի եւ օտարերկրյա այն քաղաքացիները, որոնք հետաքրքրված են Ասոցիացիայի նպատակների համատեղ լուծմամբ,

ընդունում եւ հետեւում են Ասոցիացիայի կանոնադրությանը, վարչության որոշումներին եւ ներքին կանոններին:

Ասոցիացիային կարող են անդամակցել ինչպես Հայաստանի Հանրապետության հպատակները, այնպես էլ ոչ հպատակները:

### **Մաս 3. Ասոցիացիայի բաժինները (միությունները)**

- 3.1. Մասնագիտական եւ կորպորատիվ շահերի պաշտպանության հարցում Ասոցիացիայի անդամների գործունեությունն առավել արդյունավետ համակարգելու, ինչպես նաեւ գործող օրենսդրությունը կատարելագործելուն միտված նախաձեռնություններն ու առաջարկները քարոզելու աշխատանքները կազմակերպելու նպատակով Ասոցիացիայում ձեւավորվում են բաժիններ (միություններ):
- 3.2. Բաժիններից (միություններից) յուրաքանչյուրը հանդիսանում է Ասոցիացիայի գործունեության ուղղությունների մասնակիցների միավորում (օրինակ՝ ֆինանսական շուկայի մասնակիցների բաժին, արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների բաժին եւ այլն) ու չունի իրավաբանական անձի իրավունքներ:
- 3.3. Ասոցիացիայի այս կամ այն բաժնի ձեւավորման մասին որոշումն ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից:
- 3.4. Բաժիններն իրենց գործունեությունն իրականացնում են Ասոցիացիայի կանոնադրությանն ու ներքին կանոններին համապատասխան:
- 3.5. Բաժինների աշխատանքը կազմակերպելու համար բաժնի անդամների կողմից կարող են ձեւավորվել բաժինների կառավարման մարմիններ, փորձագետների խորհուրդներ, հանձնաժողովներ եւ աշխատանքային խմբեր:
- 3.6. Բաժինների կառավարման մարմիններ ստեղծելու, դրանց ղեկավարներին նշանակելու եւ ազատելու, ինչպես նաեւ բաժինների գործունեության կանոնակարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից:

### **Մաս 4. Ասոցիացիային անդամակցելու կարգը**

4.1. Ասոցիացիային անդամակցելու մասին դիմումը հավակնորդները ներկայացնում են Ասոցիացիայի նախագահի անունով (Դիմումի ձեւը կցվում է. Հավելված 1):

4.2. Դիմումին կից ներկայացվում են՝

Իրավաբանական անձանց դեպքում

- կազմակերպության պետական ռեգիստրում գրանցված լինելու մասին վկայականի պատճենը,
- կազմակերպության կանոնադրության պատճենը,
- գրանցման քարտը (Քարտի ձեւանմուշը կցվում է. Հավելված 2):

ֆիզիկական անձանց դեպքում

- անձնագրի պատճենը,
- դիպլոմի պատճենը,
- Անդամակցության դիմումը (Հավելված 3):

Ասոցիացիան իրավասու է հավակնորդներից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն:

4.3. Ասոցիացիային անդամակցելու համար ներկայացված դիմումը՝ սույն Կանոնների 4.2. կետով սահմանված փաստաթղթերի հետ միասին, քննարկվում է Ընդհանուր ժողովում՝ դիմումը ստացվելուց 15-օրյա ժամկետում: Յուրաքանչյուր դիմումի վերաբերյալ կայացվում է առանձին որոշում:

4.4. Հավակնորդը Ասոցիացիայի անդամ է դառնում, եթե Ընդհանուր ժողովը կայացնում է նրա ներկայացրած դիմումը բավարարելու մասին որոշում: Որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել Ընդհանուր ժողովի մասնակիցների պարզ մեծամասնությունը:

4.5. Անդամակցության վերաբերյալ Ընդհանուր ժողովի քվեարկությունը կարող է կազմակերպվել հարցումների միջոցով (հեռակա քվեարկություն)՝ Ասոցիացիայի կանոնադրությամբ նախատեսված կարգով:

4.6. Ասոցիացիային անդամակցելու մասին դիմումը բավարարելու կամ մերժելու Ընդհանուր ժողովի որոշման մասին հավակնորդը տեղյակ է պահվում գրավոր՝ Ընդհանուր ժողովի որոշումից հետո երկու օրվա ընթացքում:

## **Մաս 5. Անդամավճարներ**

5.1. Ասոցիացիայի շարքերն ընդունվելու դեպքում Ասոցիացիայի անդամները մուծում են մուտքի վճար:

Մուտքի վճարի չափն ու վճարման պայմանները սահմանում է Ընդհանուր ժողովը:

5.2. Ընդհանուր ժողովը կարող է սահմանել անդամավճարներ, ինչպես նաև այլ վճարներ՝ Ասոցիացիայի գործունեության եւ աշխատանքների կազմակերպման համար նորմալ պայմաններ ապահովելու նպատակով:

5.3. Ասոցիացիայի անդամի լիազորությունների դադարեցվելու կամ, ընդհանուր ժողովի որոշման հիման վրա, Ասոցիացիայի շարքերից հեռացվելու դեպքում, անդամավճարները կամ Ասոցիացիային սեփականության իրավունքով տրված այլ միջոցներն ու գույքը չեն վերադարձվում:

## Մաս 6. Ասոցիացիայի անդամի լիազորությունների դադարեցումը

6.1. Ասոցիացիայի անդամի լիազորությունները դադարեցվում են, երբ

- Ասոցիացիայի անդամը ներկայացնում է դիմում՝ Ասոցիացիայի շարքերից դուրս գալու մասին,
- ընդունվում է որոշում՝ նրան Ասոցիացիայի շարքերից հեռացնելու մասին:

6.2. Ասոցիացիայի անդամն իրավունք ունի սեփական հայեցողությամբ եւ առանց պատճառները ներկայացնելու դադարեցնել իր անդամակցությունը Ասոցիացիայի շարքերում:

6.3. Ասոցիացիայի անդամը կարող է դադարեցնել իր անդամակցությունը՝ Ասոցիացիայի նախագահին ներկայացնելով համապատասխան դիմում:

6.4. Ասոցիացիայի անդամը Ասոցիացիայի շարքերից հեռացվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ:

6.5. Ասոցիացիայի անդամին Ասոցիացիայի շարքերից հեռացնելու հարց կարող է բարձրացվել՝

- Ասոցիացիայի Կանոնադրության, սույն Կանոնների, ինչպես նաեւ Ասոցիացիայի վարչության որոշումները չկատարելու դեպքում,
- մասնագիտական գործունեության ընթացքում Ասոցիացիայի կողմից հաստատված բարոյական վարքագծի կանոններին չհետեւելու եւ խախտելու դեպքում,
- 3 ամիս անընդմեջ անդամավճարները չմուծելու դեպքում:

6.6. Ասոցիացիայի անդամին հեռացնելու մասին որոշումն ընդունվում է Ընդհանուր ժողովին ներկա մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

6.7. Ասոցիացիայի անդամին հեռացնելու մասին որոշումն ուժի մեջ է մտնում այն ընդունելու պահից:

6.8. Ընդունված որոշման մասին Ասոցիացիայի վարչությունը Ասոցիացիայի բոլոր անդամներին տեղյակ է պահում՝ որոշումն ընդունելու պահից 10 օրվա ընթացքում:

**Հավելված 1.**

Հասարակայնության հետ կապերի հայաստանյան  
ասոցիացիայի նախագահին

**ԴԻՄՈՒՄ**

Խնդրում եմք \_\_\_\_\_ (կազմակերպության  
անվանումը) ընդունել Հասարակայնության հետ կապերի հայաստանյան  
ասոցիացիայի շարքերը:

Պարտավորվում եմք հետևել Ասոցիացիայի կանոնադրությանն ու անդամակցության  
կանոններին, մուծել մուտքի վճարը, ինչպես նաև ժամանակին կատարել  
Ասոցիացիայի ընդհանուր ժողովի կողմից սահմանված անդամավճարները:

Կից ներկայացվում են՝

1. Կազմակերպության՝ պետական ռեգիստրում գրանցված լինելու մասին  
վկայականի պատճենը,
2. Կազմակերպության կանոնադրության պատճենը,
3. Գրանցման քարտը (նախատեսված՝ թիվ 2 հավելվածով):

Կազմակերպության ղեկավար

(Անուն, ազգանուն, հայրանուն)

**Գրանցման քարտ**

1. Կազմակերպության լրիվ անվանումը
2. Համառոտ նկարագիր
3. Գրանցման ամսաթիվը
4. Հասցե  
Հեռախոս  
Ֆաքս  
Էլեկտրոնային հասցե
5. Ղեկավարի պաշտոնի անվանումը  
Անուն, ազգանուն, հայրանուն  
հեռախոս  
Ֆաքս
6. Գլխավոր հաշվապահ  
հեռախոս  
Ֆաքս
7. Իրավաբանական վարչության (բաժնի) ղեկավար  
հեռախոս  
Ֆաքս
8. Հասարակայնության հետ կապերի պատասխանատու բաժնի (վարչության)  
անվանումը, ղեկավարի անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոնը

Կազմակերպության ղեկավար (անուն, ազգանուն, հայրանուն)

## Անդամակցության դիմում

Խնդրում եմք լրացնել մեծատառերով եւ վերադարձնել գրասենյակ

1. Ազգանուն.....

2. Անուն.....

3. Քաղաքացիություն.....

Ծննդյան ամսաթիվ /ամիս/տարի: .....

4. Բնակության վայր (հասցե)

.....

Հեռախոս.....Ֆաքս.....

.....

Էլ.

փոստ.....

.....

5. Աշխատավայր

.....

6. հասցե.....

7. Պաշտոն.....

Հեռախոս.....Ֆաքս.....

.....

Էլ. փոստ.....

.....

8. Կրթությունը

.....

.....

.....

.....

.....

.....

9. Քանի տարի է, որ աշխատում եք հասարակայնության հետ կապերի ոլորտում:

.....

10. Խնդրում ենք համառոտ նկարագրել ձեր աշխատանքային փորձը

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

11. Ինչպես է կարող APRA-ն նպաստել ձեր մասնագիտական զարգացմանը:

.....

.....

.....

.....

.....

.....



12. Որ հասցեով եք նախընտրում ստանալ APRA-ի փոստային առաքումները

Աշխատանքային

Բնակության վայրի

13. Ծանոթ լինելով APRA-ի գործունեությունը կարգավորող փաստաթղթերին, հայտնում եմ համաձայնությունս հետևելու դրանցով ամրագրված նորմերին եվ կանոններին:

Դիմողի ստորագրություն \_\_\_\_\_

Անիս/Անսաթիվ \_\_\_\_\_

